


Սեւրի Դաշնագիրը Եւ Նոր Հայաստանը

Կարդալ էջ 8





**2018
PILOT**

MSRP
STARTING FROM
\$40,390*

2018 PILOT SHOWN

* Taxes not included. Visit Honda Gabriel for more details.

HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4

514 327-7777
www.hondagabriel.com

**Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian**



HONDA



The Essence of Mediterranean Gourmet



*Taste Wonderful
Taste Arz Fine Foods*



ARZ Fine Foods
1909 Lawrence Ave E, Scarborough, ON (416•755•5084), www.arzfinefoods.com

Ռաշնակցականը Եւ Հայրենիքի Տարածքը

Նախ, պատմական արագ ակնարկ մը։

Հ.Յ.Դաշնակցութեան ու հայ ժողովուրդի քաղաքական–ազգամագիտական միտքի հսկաներէն Ռուբէն Տէր Մինասեան տեղ մը կը հաստատէ. «Դաշնակցակա–նին երբ Հայաստան ըսես, ան կը տկարանայ»։

Ապացոյցի պէտք չկայ հաստատելու համար, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը հիմնուեցաւ հայրենիքին, Հա–յաստանի համար։ Այդ օրերուն (1890), հայրենիք հաս–կացութիւնը պետական–քաղաքական սահմանում չու–նէր, այլ՝ գուտ աշխարհագրական–պատմական։ Դեռ աւելի՛ն, սկզբնական տարիներուն (մինչեւ 1907), դաշ–նակցականին համար «հայրենիքը», «երկիրը» Հայաս–տան աշխարհի այն մասն էր, որ կը գտնուէր Օսմանեան կայսրութեան սահմաններուն մէջ, օսմանեան բռնատիր–րութեան տակ։ Եւ ուրեմն, օրակարգի հիմնական խնդիրը «թուրքաց Հայաստանը», կամ «Տաճկահայաս–տանը» գինեալ յեղափոխութեամբ ազատագրելու առաջադրանքն էր, «ապագայ ազատ Հայաստան»ը ստեղծելու համար։

ՍԿՋԲՆԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԸ

1894ին լոյս տեսած մեր առաջին Ծրագիրը եւ անոր նախորդող Մանիֆեստը այս քաղաքական առա–ջադրանքը ունէին՝ նշեալ բառապաշարով։ Հոն, բնա–կանաբար, քաղաքական բանաձեւումի իմաստով, աղօտ էին «Թուրքաց Հայաստան», «Տաճկահայաստան» եւ «ապագայ ազատ Հայաստան» բնորոշումները։ Այս բառապաշարային պատկերացումները բնականաբար չունէին միջազգային օրէնսդրութեան յատկանիշները, սակայն Դաշնակցութեան ու դաշնակցականին համար մէկ բան շատ յստակ էր, որ Հայաստանը (ինչ որ են անոր քաղաքական սահմանները) կը գտնուի օտար լու–ծի տակ, հայութիւնը կը հալածուի, կը հարստահարուի նոյն այդ օսմանեան լուծին տակ եւ անհրաժեշտ է գէն–քի ուժով ազատագրել հայն ու իր հայրենիքը ու ստեղ–ծել «ապագայ ազատ Հայաստանը»։ Այս էր նորակազմ Դաշնակցութեան յարած հայ մարդուն մտակառոյցը․ Կռուիլ եւ եթէ հարկ է՝ մեռնիլ ի խնդիր երկիրի ազա–տագրումին։ Իսկ «Երկիր»ը ուրիշ բան չէր, եթէ ոչ միայն ու միայն «Թուրքաց Հայաստանը» (Մանիֆես–տին եւ առաջին Ծրագիրի բնորոշումով)։

Իսկ այս ազատագրական պայքարին գաղափա–րական հիմքը ընկերվարութիւնն էր, որ կ’առաջադէր ստեղծել ազատ, անկախ ու գերիշխան պետութիւններու խաղաղ գոյակցութիւն մը, ձգտիլ ստեղծելու ժողո–վուրդներու եւ պետութիւններու՝ համահաւասարու–թեամբ յատկանշուող հասարակարգ մը, հիմնուած փո–խադարձ յարգանքի սկզբունքին վրայ։ Կացութաձեւ մը, ուր թէ՛ միջ–պետական եւ թէ՛ ներազգային հար–թութիւններու վրայ գոյութիւն չունենան իշխողներ եւ իշխուողներ, շահագործողներ եւ շահագործուողներ։ Տարբեր խօսքով, ընկերային այնպիսի համակարգ մը, որ յատկանշուի ընկերային ու տնտեսական ազատու–թիւններով, ուր քաղաքացին վայելէ այն ազատու–թիւնը, որ թթուածինի նման անհրաժեշտ է ստեղծագոր–ծելու, աշխատելու իր բնական ձգտումին համար․ ազատ համակարգ մը, որ երաշխաւորէ նոյն այդ ազատ քա–ղաքացիին՝ վայելելու իր արդար քրտինքին վաստակը, արդիւնքը։ Կասկած չկայ, որ «Հայաստան» հասկացու–թիւնը դաշնակցական քաղաքական միտքին համար ամբողջական Հայաստանն էր, նոյնիսկ երբ այդ «ամ–բողջական»ին աշխարհագրական սահմանները տակա–ւին չէին յստակացուած մեր առաջին Ծրագիրով։ Ապա–ցոյցը այն է, որ երբ Քրիստափոր Միքայէլեան կ’առա–ջադէր պատուել այն բոլոր քարտէսները որոնք գծուած էին այս կամ այն բունատէրին կողմէ, իր մտքին մէջ չկար միայն Համիտ Բ․ը՝ բնականաբար։ Քրիստափորի գրիչով բանաձեւուած դաշնակցական քաղաքական միտքին համար, կայ մէկ Հայաստան, որ պիտի ծնի բռնապետերու կողմէ մեզի պարտադրուած իրավիճակին դէմ ըմբոստացումով, յեղափոխութեամբ։

1905ին Կովկասի մէջ ծայր առած ծանրակշիռ դէպքերը նոր իրադրութիւն ստեղծեցին Դաշնակցու–թեան համար, թէ՛ գաղափարական եւ թէ՛ քաղաքական իմաստներով։ Արդարեւ հայ–թաթարական կոիւնները, ինչպէս նաեւ հայ աշխատաւորութեան իրաւունքներու հետապնդումի խնդիրները օրակարգի նոր կէտեր աւել–ցուցին մեզի համար։

Դաշնակցութիւնը, մեկնելով կեանքի այս նոր պարտադրանքներէն, թէ՛ լծուեցաւ հայութիւնը ֆիզի–քապէս պաշտպանելու գործին եւ թէ՛ Կովկասի ճար–տարուեստական կեդրոններուն մէջ հայ աշխատաւո–րութեան շահերու պաշտպանութեան։

1907ին գումարուած Հ.Յ.Դ. չորրորդ Ընդհանուր ժողովը, գաղափարական իմաստով (վերամշակուած Ծրագիրին ընդմէջէն), արձանագրեց ու բանաձեւեց եր–կու կարեւոր նուաճումներ։ Առաջինը այն էր, որ Դաշ–նակցութիւնը ԲՈՎԱՆ ԴԱԿ հայ ժողովուրդի շահերու պաշտպանն է, եւ ոչ թէ միայն Օսմանեան կայսրու–թեան սահմաններէն ներս հալածուող հատուածին։ Երկ–րորդ, ընկերվարութիւնը կը մնայ մարդկութեան բարօր ու համերաշխ ապագան երաշխաւորող միակ գաղափա–րախօսութիւնը։ Ծրագիրը կը հաստատէր, թէ ընկերվա–րութեան իրագործումը չի պահանջեր «ազգերու ի սպառ ձուլումը», այլ՝ կ’առաջադէ՛ պահպանել իւրա–քանչիւրին առանձնայատկութիւնները եւ ազգերու համերաշխ գոյակցութեամբ ապահովել մարդկութեան բարօր ապագան։

Հետեւաբար, դաշնակցական մարդուն հոգեկերտ–ուածքին մէջ ստեղծուեցաւ նոր շերտաւորում մը, որ իրականութեան մէջ հարստացուց նոյն այդ կերպարը։ Այսինքն, դաշնակցականը այն մարդն է, որ կը պաշտ–պանէ հայութեան շահերը, ինչ բնոյթ որ ունենան ատոնք (ընկերային–տնտեսական, թէ ֆիզիքական–ապահովական ու քաղաքական) եւ աշխարհագրականօ–րէն ուր որ ալ ըլլան հայն ու հայութիւնը։ Առաւել, դաշնակցականին համար այլեւս չկայ կովկասահայ, կամ թրքահայ։ Կայ միայն ու միայն հայը։

Սա պատմական նուաճում պէտք է համարել ոչ միայն դաշնակցական մարդուն, այլեւ 20րդ դարաս–կիզբի ամբողջ կոտորակուած հայութեան համար։

ՄԻԱՑԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ

Յարգ, ուրեմն, դաշնակցականի մտապատկերին մէջ զարգացում–անցում եղաւ՝ միայն «Թուրքաց Հա–յաստան»աբնակ հայէն դէպի համայն հայութիւն։ Սա–կայն տակաւին կը պակսէր շատ կարեւոր բաղադրիչ մը՝ սեփական պետականութիւնը։

Այդ պետականութիւնը ստեղծուեցաւ ինչպէս գիտենք (ու գիտենք նաեւ ինչ պայմաններու տակ) 1918ին։

Անկախութեան հռչակման առաջին տարեդարձին, կառավարութիւնը Հայաստանը հռչակեց, Միացեալ, Ազատ եւ Անկախ։ Սա թէ՛ քաղաքական եւ թէ՛ գաղա–փարական նուաճում մըն էր, որ ոչ միայն համահունչ էր Հ.Յ.Դաշնակցութեան գաղափարական սկզբունքնե–րուն, այլեւ կարելի է ըսել, բխած էր նոյն այդ ակունք–ներէն։ Այն հիմնաւորումով, որ 1918ի հանրապետու–թեան մէջ, առանցքային դերակատարութիւն ունէր Հ.Յ.Դաշնակցութիւնը ու բնական պիտի ըլլար ակնկա–լել, որ ան իր գաղափարական եւ միաժամանակ քաղա–քական մտածողութեան կնիքը դնէր նորաստեղծ իրա–կանութեան մէջ, առանց սակայն նեղ–կուսակցական պրիսմակի։

Նոյն տարին գումարուած Հ.Յ.Դ. Ծրդ Ընդհանուր ժողովը կուսակցութեան Ծրագիրին մէջ որդեգրեց Մի–ացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի գաղափարը, իբ–րեւ քաղաքական առաջադրանք, բան մը, որ ցարդ կը մնայ անփոփոխ մինչեւ այսօր։

Այս եւս պատմական զարգացում մըն էր ոչ միայն Հ.Յ.Դաշնակցութեան Ծրագրիի հոլովոյթին, այ–լեւ դաշնակցական մարդու մտածելակերպին ու հոգե–բանութեան մէջ։ Դաշնակցական մարդը Հայաստանը կ’ընկալէր միացեալ․ այլեւս չկայ Արեւելահայաստան–Արեւմտահայաստան, կայ մէկ ու միակ Հայաստան՝ աշ–խարհաքաղաքական պայմաններու բերումով բաժան–բաժան եղած Հայաստանի միացումով։ Իրականութիւն դարձած էր Քրիստափորի դիտարկումը եւ հայութիւնը, անոր իսկ բնորոշումով, «պատուած էր» բռնապետերու կողմէ գծուած արուեստական սահմանները ու գծած ի՛–րը։ Արդարութիւնը վերականգնած էր։

Ստեղծուած էր նոր իրականութիւն մը, ուր այլեւս դաշնակցական մարդուն յանձնառութիւնը ունէր աւե–լի՝ յստակ ու շօշափելի թիրախ եւ ուղղութիւն, որ այ–լեւս միացեալ հռչակուած հայրենիքն էր։

Յաջորդ տարի, 1920ի Օգոստոս 10ին, Սեւրը, ապա Ուիլսոնի իրաւարար վճիռը միջազգային օրէնքի ուժ տուին Միացեալ Հայաստանի գաղափարին, որ մաս կազմեց հանրապետութեան հիմնադրութեամբ հարս–տացած հայկական արժէքային համակարգին։

ՍՓԻՒՌՔ ԵՒ ԱՐՑԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄ

Հայաստանի խորհրդայնացումը, որուն ընկերա–ցաւ Հայաստանի սահմաններու կտրատումը, դաշնակ–ցական մարդու միտքին մէջ ոչ միայն չտկարացուց Միացեալի գաղափարը, այլեւ տասնամեակներով հանդի–

սացաւ այն հիմնական մղիչ ուժը, իսկալը, որուն վրայ խարսխուեցաւ Սփիւռքի կազմակերպումը Հ.Յ.Դ. 10րդ Ընդհանուր ժողովէն վերջ։

«Սփիւռքահայ» դարձած էին թէ՛ Դաշնակցու–թիւնը եւ թէ՛ դաշնակցական մարդը ընդհանրապէս (*): Ու այս պայմաններուն մէջ, տասնամեակներով, դաշ–նակցական մարդը դաստիարակուեցաւ վերոնշեալ ար–ժէքային համակարգին տիրութիւն ընկլու յանձնառու–թեամբ։ Ան տիրութիւն ըրաւ Հ.Յ.Դաշնակցութեան գա–ղափարական արժէքներուն, պատմութեան, սիրանքնե–րուն, ու մեկնելով ասոնցմէ՝ տիրութիւն ըրաւ Հանրա–պետութեան հիմնադրութեամբ հաստատուած արժէք–ներուն՝ եռագոյն դրօշ, զինանշան, օրհներգ, ու մանա–ւանդ՝ Միացեալ, Ազատ ու Անկախ Հայաստանի գաղա–փար։

Այս արժէքային համակարգը մաս կազմեց դաշ–նակցական մարդու հոգեբանութեան, մտածելակերպին ու աշխարհահայեացքին ու այդ ձեւով ալ՝ մղիչ ուժը հանդիսացաւ սփիւռք դարձած հայ մարդու տոկունու–թեան, ուժացումի նկատմամբ անոր ցուցաբերած դի–մադրական կարողութեան։

Ահաւասիկ ա՛յս կերպարն էր, որ երբ դէմ յանդի–ման գտնուեցաւ 1988ի Փետրուարին ստեղծուած ար–ցախեան նոր իրականութեան, անմիջապէս տրամաբա–նեց, որ հայրենիքի հողը ոչ թէ բաղձանքներով կամ «ռուսաց թագաւորին» յղուելիք նամակով կ’ազա–տագրուի, այլ՝ անձնագոհութեամբ, ի հարկին՝ արիւնով։

Այս կերպար–մտածողութիւնը պարարտ հող գտաւ հայրենի իրականութենէն ներս, «վարակեց» շատ շատեր, որոնք մեկնեցան ազատագրելու պատմականօ–րէն Հայաստանին մաս կազմած, սակայն նոյն բռնատէ–րերուն կողմէ կամայականօրէն ճշդուած սահմաններէն անդին։ Նոյն այդ սերունդը իր բաժինը բերաւ արուես–տական սահմանները պատուելու արիւնալի գործընթա–ցին։ Մնացածը գիտենք արդէն։ Արցախի մեծ մասը այսօր ազատագրուած է ու գործնականօրէն մաս կը կազմէ Երկրին։

1920–21 տարիներուն տարածաշրջանին մէջ ար–ձանագրուած եւ հայ ժողովուրդին ի վնաս ընթացած աշխարհաքաղաքական զարգացումները սրբագրելու պահն էր ասիկա, որ իրականութեան մէջ, Սեւրով եւ Ուիլսոնի սահմանադժումով Միացեալ Հայաստան կեր–տելու ճամբուն վրայ հիմնական, չօջափելի, տեսանելի քայլ է։ Այս իրականութիւնը այսօր մաս կը կազմէ դաշնակցական մարդուն ներքի էութեան, անոր գաղա–փարական ներաշխարհին։ Միացեալ Հայաստանի գա–ղափարը, Արցախի ազատագրումով, դաշնակցական մարդուն համար, տասնամեակներէ ի վեր առաջին ան–գամ ըլլալով, դուրս եկած է իր գուտ գաղափարական տարածքէն ու վերածուած է ապրող ու շօշափելի իրա–կանութեան։

Հայաստանի տարածքին, անոր հողային ամբող–ջականութեան նկատմամբ դաշնակցականին «տկարու–թիւն»ը նաեւ պատճառ կը դառնայ, որ հարուածներ ստանայ ան, ու ինք ակռաները սեղմած, հանդուրժէ այդ հարուածներուն՝ միայն թէ խնդրոյ առարկայ չդառնայ ՀՈՂԸ։ Այսպէս, Արցախի ազատագրական պայքարի բուռն ժամանակաշրջանին, դաշնակցական մարդը «կուլ տուաւ» ՀՀ օրուան նախագահին կողմէ Ընդհանուր ժողովը խափանելու, Բիւրոյի ներկայացու–ցիչը Հայաստանէն արտաքսելու այլանդակութիւնը (Յունիս, 1992), միայն թէ չտուժէ հայրենի հողը ազա–տագրելու այն պայքարը, որ իրեն, դաշնակցական մարդուն համար մտասեւեռում, կեանքի նպատակ դար–ձած էր։

Տարբեր խօսքով, մեր գաղափարական ներաշխար–հին մէջ, Երկիրը թէ՛ մեր ուժի ու կամքի աղբիւրն է, եւ թէ՛ միաժամանակ մեր Աքիլլեսի կրունկը՝ մեր հակա–ռակորդներուն կողմէ դիտուած։

Դաշնակցական մարդը կը մնայ տէրը այն յանձ–նառութեան, որուն նպատակն է հայրենիքի տարածքը ամբողջական տեսնել։

(*) Քիչերուէ յայտնի է, որ Հայաստանի խորիւր–դայնացումէն եւ Փետրուարեան ապստամբութենէն վերջ, Հ.Յ.Դաշնակցութիւնը շարունակեց իր կազմա–կերպական ցնրկայութիւնը Հայաստանի մէջ՝ հասկ–նալիօրէն ընդյատակեայ պայմաններու մէջ։ Մինչեւ որ Բիւրոն, 30 ականցնրու սկիզբները, լուծեց Հ.Յ.Դ. հայաստանեան կազմակերպութիւնը։

ՎԱԶԷ ԲՐՈՒՏԵԱՆ

«Ազգային Համաձայնության Կառավարությունից Դուրս Գալու Հարց, Այս Պահին, Մեր Օրակարգում Զուգենք»

«ՖԱԿՏՈՐ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՀՅՌ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻԶ ԵՄ ԱՐՄԷՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆԻ ՀԵՏ

ՀՅՌ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արսէն Համբարձումեանի հետ «Ֆակտոր»ը («factor.am»ը) գրուցած է ՀՅՌ Բիւրոյի ներկայացուցիչ ՀՅՌ-ի՝ Ազգային համաձայնութեան կառավարութեան մաս կազմելու չկազմելու եւ այլ հարցերու շուրջ. ստորեւ այդ գրոյցը.

«ՖԱԿՏՈՐ».- Պարոն Համբարձումեան, վարչապետ Նիկոլ Փաշինեանը Տաւուշի մարզում պատասխանելով լրագրողի հարցին, որ կոալիցիոն գործընկեր Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի կարծիքով՝ Հայաստանում տեսակէտ, կարծիք ու մտահոգութիւն յայտնելու առումով մտքի տեղոր է՝ ասաց, որ նրանք, ովքեր իրենց դուրս եմ համարում Ազգային համաձայնութիւնից (կառավարութիւնից այսինքն) ազատ են, ոչ մէկի ձեռքը չեն բռնել: Յաւելեց, որ Հայաստանում չկայ կոալիցիոն կառավարութիւն: Սա համարու՞մ է՞ քաղաքական ապահարգանք:

ԱՐՄԷՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ.- Նախ, ուզում եմ արձանագրել, որ դա ձեր գնահատականն է: Այսինքն, որ դա պատասխանն էր Հրանդ Մարգարեանի ասածին: Եւ եկէ՛ք ենթադրութիւններ չանե՛նք: Հիմա ըստ էութեան՝ Հայաստանի ներկայ կառավարութիւնը քաղաքական ֆորս մաժորի (ուժերու դասաւորումով, կատարուած իրողութեան-խմբ.) արդիւնքում է ձեւաւորուել եւ, այն, բնականաբար, դասական իմաստով քաղաքական կոալիցիա չէ: Պայմանա-

կանօրէն այն ստացել է Ազգային համաձայնութեան կառավարութիւն անունը եւ դա ամրագրուած է նաեւ կառավարութեան գործունէութեան ծրագրում: Այս առումով, չեմ կարծում, որ որեւէ նոր բան է ասուել եւ յատուկ մեկնաբանման կարիք կայ: Իսկ առհասարակ, ցանկացած քաղաքական համագործակցութիւն մարտավարական բնոյթ ունի եւ թելադրուած է կոնկրետ (յստակ-խմբ.) քաղաքական իրողութիւններով: Եւ բնական է, որ գործընկերային յարաբերութիւնների մէջ գտնուող քաղաքական ուժերը տարբեր հարցերի հետ կապուած կարող են ունենալ նաեւ տարբեր մօտեցումներ: Մանաւանդ այս պարագայում, երբ կողմերը կաշկանդուած չեն որեւէ համաձայնագրով: Եւ ոչ միայն Ռուբերտ Բոջարեանի, այլեւ Հայ առաքելական եկեղեցու, պարտադիր կուտակային համակարգի հետ կապուած հարցերում մենք մեր մօտեցումները հրապարակային արտայայտել ենք եւ չի բացառոււմ, որ յետագայում եւս հանդէս գանք տարբեր մօտեցումներով: Եւ գործընկերութիւնն ամենեւին չի նշանակում բոլոր հարցերում միակարծութիւն: Եւ վաղն էլ տարբեր ցուցակներով ենք մասնակցելու երեւանի աւագանու ընտրութիւններին:

«ՖԱԿՏՈՐ».- Ասում է՞ք, որ բան չի ասել, բայց նորմ այն էր, որ ասաց՝ մենք ոչ մէկի ձեռքը չենք բռնում:

ԱՐՄԷՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ.- Իսկ նախկինում որեւէ մէկը որեւէ մէկի ձեռքը բռնե՞լ է:



«ՖԱԿՏՈՐ».- Միգուցէ չի բռնել, բայց բոլորս յիշում ենք, թէ ինչպէս Նիկոլ Փաշինեանը պարտադիր կուտակային համակարգի հետ կապուած բաց տեխտով, եւ անգամ՝ գայրացած՝ ՀՀ տնտեսական եւ ՀՀ ներդրումների ձեռք նախարարին ասաց, որ ոչ ոք չի կարող դէմ քուէարկել ընդունուող որոշումներին, չնայած ՀՅՌական նախարարը նախապէս ասել էր, որ սկզբունքօրէն դէմ լինելով՝ կողմ է քուէարկելու:

ԱՐՄԷՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ.- Արծուիկ Մինասեանն ասել է, որ դէմ է պարտադիր կուտակային համակարգին, նոր բերուած օրէնքի նախագիծը բոլորովին այլ բանի մասին էր, որ ժամանակաւոր լուծում է տրոււմ յետագայում պարտադիր կուտակային համակարգի հարցին բովանդակային անդրադարձ կատարելու համար: Այնպէս որ, եկէ՛ք ասուած ամէն մի բառ, ամէն մի արտայայտութիւն ճիշդ գնահատենք՝ տարակարծիք մեկնաբանութիւնների տեղիք չտալու համար:

«ՖԱԿՏՈՐ».- Ճիշդ գնահատե՛նք:

Ուղղակի, երբ ասում է՞ք սա պատասխանը չէր Հրանդ Մարգարեանին, ապա ասեմ, որ հարց տրուեց, թէ ինչպէս է գնահատում Նիկոլ Փաշինեանը կոալիցիոն գործընկեր ՀՅՌ Բիւրոյի ներկայացուցչի յայտարարութիւնը, ինչից յետոյ Նիկոլ Փաշինեանն ասաց այն, ինչ ասաց:

ԱՐՄԷՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ.- Մենք էլ ասել ենք այն, ինչ ասել ենք: Եւ հիմա էլ ասում ենք, որ մեր համագործակցութիւնը միտուած է մէկ բանի, որպէսզի համաժողովրդական շարժման արդիւնքում սկսուած գործընթացները ճիշդ հունով գնան, որպէսզի չվտանգենք մեր անվտանգութիւնը, մեր երկիրն ու ժողովուրդն իրապէս շահեն եւ զարգացման նոր հնարաւորութիւններ ստեղծուեն: Եւ մենք հաւատացած ենք, որ իշխանութեան թէ՛ յաջողութիւնը, թէ՛ ձախողումը բոլորինս է: Եւ այս առումով, մեր մօտեցումներում ոչինչ չի փոխուել թէ՛ 3 ամիս առաջ, թէ՛ հիմա: Եւ մենք անկեղծօրէն ամէն ինչ անում ենք, որ Հայաստանում սկսուած գործընթացները յաջողեն:

Այցելեցեք hitunes.ca կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը HITUNES.CA	Ունկնդրեցեք triktrak.ca կայքէջի հայկական համացանցային ռադիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ TRIKTRAK.CA
--	--

CIBC Aline Shnorhokian Mortgage Advisor Tel: 1 866 231-8876 Fax: 450 688-7555 Cell: 514 797-1375 aline.shnorhokian@cibc.com	Groupe Sutton - Performer Inc. 123 Place Frontenac Pointe-Claire, QC H9R 4Z7 Albert Arkilanian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 *certaines conditions s'appliquent	NISSAN VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS HONDA GABRIEL Kevork Asadourian Directeur des ventes - usagé Sales Manager - Pre-Owned kasadourian@gabriel.ca 7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4 Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967 www.nissangabriel.com • www.hondagabriel.com
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	Personal & Corporate Tax Returns Financial Statements Bookkeeping Business Plan NATALIE SKAFF, CPA, CGA Comptable Professionnelle Agréée Chartered Professional Accountant nat.skaff@gmail.com Tel. (514) 963 3363 2866 Rue De Chamonix Saint-Laurent, Québec H4R 3B7 Services available in Armenian, Arabic, English and French	BRING YOUR OWN WINE NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
SAMUEL TOPALIAN 450 682-1644 AUTO SAMSON MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE SERVICE DE PNEUS MISE AU POINT 4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.	RE/MAX ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ Hayk Hartounian Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker C 514.574.6162 B 514.333.3000	NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Հայաստան-Թուրքիա սահմանագծի անվաերականությունը (Սեւրի Դաշնագրի Հեղինակությունը)

Սեւերի դաշնագիրը քաղաքական
 եւ դիւանագիտական ուժոյն հեղինա-
 կութիւն պարտադրող այն հիմնական
 միջազգային համաձայնագիրն է, որ հե-
 տեւողականօրէն կը հաստատէ ու կը վե-
 րահաստատէ Հայաստանի եւ Թուրքիոյ
 այժմու սահմանագծին անվաւեր հան-
 դամանքը: 98 տարիներ առաջ, 1920
 Օգոստոս 10ին ստորագրուած այս դաշ-
 նագիրը միջազգային միակ պայմանա-
 գիրն է, որ կը բացործէ ցարգ չգոր-
 ծադրուած վաւերական սահմանագծումը
 երկու երկիրներու միջեւ:

Հակառակ այն իրողությունն, որ Սեւրի դաշնագիրը տակաւին կը մնայ անվաւեր ստորագիր պետութիւններուն կողմէ, Հայաստանի վերաբերող անոր տրամադրութիւնները կը շարունակեն մնալ ուղեցոյց Հայաստան-Թուրքիա վերջնական սահմանագծումին: Դաշնագրի նոյնինքն անվաւեր մնալու հանգամանքը ինքնորոտիքեան կը հանգրիստանայ փաստը երկու երկրներու միջեւ վերջնական սահմանագծումի անլոյծ մնացող իրողութեան:

Իր թիւ 88էն թիւ 93 յաջորդական
յօդուածներով, Սեւրը ամրագրեց արդէն
իսկ իբրեւ անկախ պետութիւն գոյու-
թիւն ունեցող Հայաստանի մը պատմա-
կան եւ իրաւական հիմունքներով կազ-
մութիւնը եւ ճանաչումը: Որդեգրելով
Դաշնակից Ուժերու Գերագոյն Խորհուր-
դի Հայաստանի սահմաններուն առն-
չուող որոշումը, դաշնագիրը Հայաստա-
նի սահմաններու վերջնական ճշգրտմը
յանձնեց Միացեալ Նահանգներու նա-
խագահ Վուոթը Ուիլսոնի իրաւարարու-
թեան: Դաշնագրի ստորագրութենէն
երեք ամիս ետք, նախագահ Ուիլսոն իր
իրաւարար վճիռը որոշեց եւ յայտարա-
րեց Նոյեմբեր 22, 1920ին:

Հակառակ այն իրողութեան որ Սեւրի դաշնագիրը Հվաւերացուեցաւ ստորագիր պետութիւններու կողմէ, Ուիլսոնի իրաւարար վճիռը կը մնայ ի գորու եւ գործադրելի՝ ըստ միջազգային օրէնքի եւ Հաստատուած միջազգային ուխտերու: Սեւրով Հաստատուած այս վճիռը վերջնականապէս կը գծէ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սասանները, որոնք որեւէ ձեւով չեն ներկայացուած ներկայիս գոյութիւն ունեցող սահմանագիծով:

Ուխտընդի իրաւարար վճիռը, հետեւելով Թուրքիոյ իսկ համաճայնութիւնը վայելող Դաշնակից Ուժերու որոշումին եւ Սեւրի դաշնագրի տրամադրութեանց, Օսմանեան կայսրութեան հայապատկան հողատարածքներու մեծ մասը (ինչպէս

Էրգրումի, Պիժլիսի, Տրապիզոնի եւ Վանի նահանգները) կցեց ու միացուց Հայաստանի Հանրապետության: Այսպիսով չուրջ 50 հազար քառակուսի քիլոմետր հաշվող հայկական հանրապետության կը միացուէր Արեւմտեան Հայաստանէն 103 հազար քառակուսի քիլոմետր հողատարածք՝ Հայաստանը վերածելով 153 հազար քառակուսի քիլոմետր երկրի:

Դժբախտաբար, քաղաքական, տնտեսական եւ զինուորական գերակշիռ դործոններ արգելակեցին Սեւրի դաշնագրի վաւերացումը ստորագիր պետութիւններուն կողմէ։ Այս պայմաններու տակ չգործադրուեցան Ուիլսոնի իրաւաբար վճիռի սահմանադրումները։ Ինչպէս նաեւ իր կարգին, Հայաստանի Հանրապետութիւնը, որ արդէն իսկ ներքնապէս եւ արտաքնապէս մաշոււմի ու քայքայումի կ'ենթարկուէր պուշեւիկ Ռուսաստանի եւ Վեմալական ուժերու զինակցային դաւադրութեան, քաղաքական ու զինուորական կարողականութիւնը չունէր պաշտպանելու Սեւրով տրամադրուած Ուիլսոնեան իրաւաբարութեան սահմանուած իր իրաւունքները։

Արդ, 1920 Դեկտեմբեր 25ն ի վեր Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանագիծը կը մնայ անվաւեր: Քաջ գիտակցելով Հայաստանի հողատարածքին ամբողջականութիւնը պարտադրող Սեւրի դաշնագրի տրամադրութեանց եւ Ուիլսոնի իրաւաբար վճիռի ներկայացուցած վտանգներուն, Թուրքիա փորձեց միջկազմակրի օրէնքի հիման վրայ ընդունուած այս կրկնակ որոշումները չըջանցել՝ Հայաստանին պարտադրելով զանոնք փոխարինելու միտող պայմանագրերով:

Այս ուղղութեամբ թրքական առաջին փորձը հանդիսացաւ 1920 Յեկտեմբեր 3ի Ալեքսանդրապոլի դաշնագիրը, որ Թուրքիա պարտադրեց Հայաստանի Հանրապետութեան: Թրքական սալի եւ պոլշեկիկեան մուրճի միջեւ բռնուած մեր անկախ պետութիւնը ստիպողաբար ենթարկուեցաւ պարտադրանքին: Այս դաշնագրով կը պարտադրուէր Հայաստանին իրաւականօրէն հրաժարիլ Սեւրի դաշնագրէն: Հայաստանի հանրապետութեան պատուիրակութիւնը՝ նախկին վարչապետ Ալեքսանդր Պատրիսեանի գլխավորութեամբ դիտմամբ երկարածեց բանակցութիւնները մինչեւ Յեկտեմբեր 3ի լուսցող ժամերը: Երբ ստորագրուեցաւ դաշնագիրը, արդէն իսկ օրմը առաջ, Յեկտեմբեր 2ի կէսօրէ ետք ժամը 5ին Հայաստանի պետական լիազօրութիւնները ստանձնած էր պոլշեկիկ-

եան յեղկումը: Իր կարգին, Քեմալ Աթաթուրքի ներկայացուցիչները իրաւասութիւն Օսմանեան պետութեան անունով դաշնագիր ստորագրելու:

Թրքական կողմը շարունակեց Սեւ-
րի եւ Ուլւստոնեան վճիռի չըջանցման ու
Հայաստանի հետ սահմանագծի վերջնա-
կանացման նոր սաղրանքները։ Այսպէս,
1921ին Կարսի մէջ ստորագրուեցաւ
դաշնագիր մը՝ Խորհրդային Հայաստանի
եւ Մուսթաֆա Քեմալի ներկայացուցիչ-
ներուն միջեւ՝ հաստատելու համար
Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ դոյու-
թիւն ունեցող ներկայ սահմանագիծը։
Կարսի դաշնագիրը, Ալեքսանդրապոլի
դաշնագիրին հետեւողութեամբ, զուրկ էր
իրաւական հիմունքներէ եւ վաւերակա-
նութենէ, որովհետեւ Խորհրդային Հա-
յաստանի կողմէ ստորագիր իշխանու-
թիւնը Մուսթաֆան էր, իսկ թրքական կող-
մէն Մուսթաֆա Քեմալի ներկայացուցիչ-
էր, որ չէր լիազօրուած պաշտօնական
Օսմանեան կառավարութեան կողմէ։

Ներկայ սահմանագծի վերջնական ճանաչման համար, ներկայիս Թուրքիա իրաւական ապաւէն կը փնտռէ Յուլիս 24, 1923ին ստորագրուած Լօզանի դաշնագրին մէջ՝ զայն նկատելով Սեւրը փոխարինող նոր համաձայնագիր: Սակայն, միջազգային օրէնքով Լօզանը չփոխարինեց եւ Հէր կրնար փոխարինել Սեւրը: Այս երկու դաշնագրերը առաջին հերթին իրարու հետ չեն առնչուիր, որովհետեւ ի՛նչնզգրկեն իրարմէ՛ տարբեր նիւթեր: Երկրորդ, ամոնց ստորագիր պետութիւնները նոյնը չեն եւ նոյն նպատակները չունին:

Աւելիին, Լօղանի դաշնագիրը կը


Հաստատել Սեւերի դաշնագրով ճշգրտած այն սահմանագիծը, որուն գործադրումը թիւնը տակաւին կ'ուշանայ: Լօզանի դաշնագրի 16րդ յօդուածի հիմամբ Թուրքիա կը հրաժարի իր բոլոր իրաւունքներէն եւ իրաւատիրութենէն բոլոր այն տարածքներուն մէջ, որոնք մաս չեն կազմեր Լօզանի դաշնագրի քննարկման: Յստակօրէն, Սեւերի դաշնագրով Ուիլսոնեան իրաւարարութեան վճիռին հիմամբ ճշգրտած Հայաստանի հողատարածքի սահմանները մաս չէին կազմեր Լօզանի քննարկումներուն:

Այսօր, Հայաստան-Թուրքիա սահմանագիծը վաւերական է եւ տակաւին կը սպասէ իր վերջնական այն լուծումին, որ տրամադրուած է Սեւրի դաշնագրով ու Ուիլսոնեան իրաւարարութեամբ:

Որքան ալ իրաւական ճշմարտութիւն ըլլայ Սեւրի անվաւեր հանգամանքը, ան կը շարունակէ պահել իր բարոյական եւ քաղաքական հեղինակութիւնը չնորհիւ նախագահ Ուիլսընի իրաւարար վճիռին: Այս վճիռը գործադրելի է՝ ըստ միջազգային օրէնքի եւ պայմանագրերու: Զայն գործադրելու համար անհրաժեշտ են դիւանագիտական հետեւողական աշխատանք եւ քաղաքական կամք:

Հայաստանի դիւանագիտութեան եւ հայկական Սփիւռքի պարտականութիւնն է այդ քաղաքական կամքը ցուցաբերելու եւ հետեւողական աշխատանքը իրականացնելու ծանր գործը:

ՍԵՂՈ ՊՈՅԱՃԵԱՆ



Սեւրի Դաշնագիրը Եւ Նոր Հայաստանը

Սեւրի Դաշնագիրը Եւ Նոր Հայաստանը

Հանրայայտ պատմաքաղաքական իրողութիւն է, որ 1920–ին Սեւրի վեհաժողովը տեղի կ'ունենար մի–ջազգային թէ շրջանային առուսմով չափազանց հակա–սական, տարաբնոյթ եւ քաղաքական խառնաշփոթ կա–ցութիւններու լոյսին տակ։

Մէկ կողմէ՝ Ա. Աշխարհամարտի դաժան պայման–ները, միւս կողմէ՝ 1917–ի հոկտեմբերին այլեւս անկան–խատեսելի քաղաքականութիւններու երկիր դարձած Ռուսիոյ մէջ պոլշեւիկեան յեղաշրջումը, որ ամբողջ տարածաշրջանը կը մատնէր դժնդակ կացութեան։

Ա. Աշխարհամարտը կը հասնէր իր աւարտին, պարտ–ուած Թուրքիան ենթակայ էր մեծերու դատավճիռին։

1918 հոկտեմբերին երիտթրքական կառավարու–թիւնը հրաժարեցաւ։ Լուծուեցաւ երկիրը ղեկավարող «Միութիւն եւ յառաջդիմութիւն» կուսակցութիւնը։

Նոյեմբերի սկիզբը դաշնակիցներուն եւ Թուրքիոյ միջեւ կնքուեցաւ Մուտրոսի զինադադարը։

Թրքական բանակները քաշուեցան անդրկովկաս–եան տարածաշրջանէն։

Փաստօրէն Ա. Աշխարհամարտը իր աւարտին կը հասնի դաշնակիցներու յաղթանակով եւ Թուրքիոյ պարտութեամբ։

Խաղաղութեան եւ հաշտութեան համաժողովը տեղի կ'ունենայ ուրեմն Փարիզի արուարձաններէն Սեւրի մէջ։ Դաշնագիրի ստորագրութեան կը մասնակ–ցին՝ Անգլիա, Ֆրանսա, Իտալիա, Ժափոն, Պելճիքա, Յունաստան, բոլորը։ Պաշտօնապէս կը հրաւիրուի Հա–յաստանի Հանրապետութեան պատուիրակութիւնը՝ նա–խագահութեամբ Աւետիս Ահարոնեանի։ Ներկայ կ'ըլ–լան օսմանեան Թուրքիոյ իթթիհատական կառավարու–թեան ներկայացուցիչները։

Սեւրի դաշնագիրը միջազգային քաղաքական վաւերական այն թուղթն է, մեծ պետութիւններու եւ պարտուած Թուրքիոյ միջեւ կնքուած միակ փաստա–թուղթը, որով պաշտօնական ճանաչում կը ստանան միացեալ, ազատ եւ անկախ Հայաստանի Հանրապետու–թիւնը եւ Թուրքիայէն անոր ունեցած արդար ու լիիրաւ պահանջները։

Տուեալ դաշնագիրով Հայաստանի տարածքը կը դառնար 161 հազար քառակուսի քիլոմեթր, ինչ որ ի վիճակի կը դարձնէր աշխարհասփիւռ հայութեան հա–մախմբումը այդ տարածքին վրայ եւ այլ քաղաքակիրթ ազգերու կողքին կ'ապահովէր հայութեան անվտան–գութիւնն ու անկաշկանդ զարգացման եւ ստեղծագոր–ծութեան շարունակութիւնը։

Արդարեւ, Հայաստանի պատուիրակութեան խնդրանքին ընդառաջելով՝ Միացեալ Նահանգներու նախագահ Վուտրօ Ուելսըն յանձն կ'առնէր հովանա–ւորել եւ իր աւարտին հասցնել այս գործը։

Սոյն դաշնագիրը ստորագրուեցաւ, եւ բոլոր դաշ–նակից պետութիւններու համաժողովը այսպիսով հռչա–կեց միացեալ, անկախ եւ ազատ Հայաստան։

Սեւրի դաշնագիրին Հայաստանի վերաբերող վեց յօդուածները հետեւեալներն են. յօդուածներ՝ 88, 89, 90, 91, 92 եւ 93։

Սակայն հիմնականին մէջ պէտք է լուսարձակի տակ բերել յօդուած 89–ը, ուր կ'ըսուի, թէ Թուրքիա եւ Հայաստան, ինչպէս նաեւ միւս պայմանադիր բարձր կողմերը կը հաւանին Ամերիկայի նախագահին իրաւա–րարութեան յանձնել էրզրումի, Տրապիզոնի, Վանի եւ Պիթլիսի նահանգներուն մէջ Թուրքիոյ եւ Հայաստանի սահմանին որոշումին խնդիրը եւ ընդունիլ նախագահի որոշումով Հայաստանի ծով իջնելուն եւ վերոյիջեալ սահմանին յարակից բոլոր օսմանեան հողերը զինուո–րապէս չէզոքացնելու մասին պատրաստուած բոլոր տրամադրութիւններուն։

Հայկական հարցին՝ Սեւրի դաշնագիրին պատմա–կան ամէնէն մեծ ծառայութիւնը այն էր, որ աշխարհը պաշտօնապէս ճանչցաւ իր հայրենիքին՝ Արեւմտեան Հայաստանի նկատմամբ հայ ժողովուրդի իրաւաքաղա–քական իրաւունքները։

Այսօր, Սեւրի դաշնագիրի ստորագրութենէն 98 տարիներ ետք, 161.000 տարածքէն մնացած է միայն Արդի Հայաստանի Հանրապետութեան 29.000 քառա–կուսի քիլոմեթր եւ Արցախի ազատագրուած տարածքը։

Այսօր Հայաստանը, 1991–էն ի վեր, վերստին ան–

կախացած է, Հայաստանի Հանրապետութիւնը վերստին միջազգային ընտանիքի լիիրաւ անդամ է՝ փոխադարձ պարտականութիւններով եւ պարտաւորութիւններով, Հայաստանը ՄԱԿ–ի անդամ է, Հայաստանը անդամ է նաեւ ՀԱՊԿ–ի, ԵԱՏՄ–ի, Եւրոխորհուրդի խորհրդարա–նական յանձնախումբի, ինչպէս նաեւ՝ Եւրոպական անվտանգութեան եւ համագործակցութեան Հելսինքիի 1975–ի եզրափակիչ փաստաթուղթի 10 պարբերութեան, որուն համաձայն, միջազգային ընտանիքի անդամնե–րու միջեւ գոյութիւն ունեցող հակամարտութիւնները լուծելու համար կը թեկադրէ միջազգայնօրէն ստանձ–նած պարտաւորութիւնները անվարան կատարել։

Հետեւաբար, Հայաստանի Հանրապետութիւնը միջազգային իրաւաքաղաքական հիմունքներով ի վի–ճակի է ցանկացած մէկ պահուն ՄԱԿ–ի Ապահովու–թեան խորհուրդի եւ միջազգային միւս բոլոր կազմա–կերպութիւններուն ուշադրութեան յանձնել, որ Թուրք–իան կը խուսափի կատարել Ուլիւքնի իրաւարար վճի–ռով ստանձնած պարտաւորութիւնները, այսինքն՝ հայ–թրքական հողային եւ սահմանային խնդիրը։

Հայաստանի Հանրապետութեան միջազգային դիրքերու ամրապնդման, հզօրացման, հեղինակութեան եւ անվտանգութեան համար անհրաժեշտ է հայ–թրքա–կան յարաբերութիւնները, սահմանային խնդիրները փոխադրել իրաւական հարթակ եւ այդ յարաբերու–թիւններուն մէջ գոյութիւն ունեցող բոլոր խնդիրնե–րուն տալ իրաւաքաղաքական լուծումներ։

Պէտք է ճշդել Հայաստանի եւ Թուրքիոյ յարաբե–րութիւնները՝ մեկնելով Հայաստանի եւ համայն հայու–թեան անվտանգութենէն, որուն խարխիւր կը հանդի–սանայ Սեւրի դաշնագրի իրաւաքաղաքական տարո–ղութիւնը եւ ռազմաքաղաքական նշանակութիւնը։

Այդ իսկ պատճառով մենք լիայոյս ենք, որ նոր Հայաստանի իշխանութիւններու վարած արտաքին քա–ղաքականութեան կալուածին մէջ կարեւորագոյն հատ–ուածներէն մէկը կը հանդիսանայ Սեւրի յղումը, Սեւրի դաշնագիրի արծարծումը եւ վերակենդանացումը։

Մենք լիայոյս ենք, որ վերջերս Հայաստանի Հան–րապետութեան մէջ տեղի ունեցած ողջունելի քաղա–քական իրադարձութիւնները եւ իշխանափոխութիւնը միանշանակ հասկնալիօրէն պիտի ծառայեն վերոնշեալ մտորումներուն. այլ խօսքով, մենք լիայոյս ենք, որ կը ծառայեն ու կը նպաստեն ազգային համախմբուածու–թեան եւ միասնականութեան, եւ ոչ թէ հատուածապաշ–տութեան եւ արտաքին միջամտութիւններու ճնշումին տակ փորձեն միջազգային որոշ կազմակերպութիւննե–րու հիմնադրամներու ֆինանսաւորումով մեր հասարա–կութիւնը տարբեր շերտերու դասակարգել կամ ճեղքել, պառակտել։

Լիայոյս ըլլալով եւ ամբողջական գօրակցութիւն յայտնելով, որ նոր Հայաստանի իշխանութիւնները յա–ջողին իրենց առաքելութեան մէջ, առնուազն Հայ Յե–ղափոխական Դաշնակցութիւնը, տրուած ըլլալով, որ ան ուղղակի մասնակից է Հայաստանի Հանրապետութեան քաղաքական նոր իրականութեան մէջ իր երկու նախա–րարներով ու մարզպետներով, մենք անվերապահօրէն կողմնակից ենք Հայաստանի Հանրապետութեան մէջ ժողովրդավարութիւնը զարգացնելու, երկիրը բարեկար–գելու, պետական համակարգը արդիականացնելու, փտածութեան դէմ պայքարը շարունակելու, պետական չարաշահումները եւ իւրացումները բացայայտելու, սակայն գուգահեռաբար կ'ականկալենք, որ ներկայ իշ–խանութիւնները նոյն վճռակամութեամբ ամրապնդեն ու պաշտպանեն ազգային արժէքային համակարգը, աւանդութիւնները, պատմութիւնը, մշակոյթը, ազգա–յին առաքելական եկեղեցին, ազգային հերոս կերպար–ները, որովհետեւ այդտեղ է յաջողութեան միակ գրա–ւականը եւ երաշխիքը։

Եւ ոչ թէ ժողովրդավարութեան եւ փոքրամաս–նութիւններու իրաւունքներու պաշտպանութեան անունին տակ հայրենի հասարակութիւնը գիրար հա–կադրելով՝ ներմուծենք այնպիսի օտար բարքեր եւ ար–ժէքներ, որոնք կրնան ջլատել, պառակտել եւ տկարաց–նել հասարակութիւնը, Հայ ընտանիքը եւ պահանջատէր մեր ժողովուրդին արդար պատմաքաղաքական իրա–ւունքներու գործընթացը։

Հայաստանի Հանրապետութեան բախտորոշ քա–ղաքական վերջին իրադարձութիւնները ապահովաբար պիտի ծառայեն հայ ժողովուրդի եւ հայրենիքի ամբող–ջական վերականգնման, եւ ոչ թէ միջազգային տարբեր կազմակերպութիւններու հիմնադրամներու ֆինանսա–ւորումներով ծրագիրներու իրականացման։ Մանաւանդ այս փուլին, երբ ամբողջ տարածաշրջանի անկայունու–թեան եւ պատերազմի վերսկսման սպառնալիքը առկայ է՝ ի տես մեր հարեւան ռազմատենչ Ազրպէյճանի ախորժակներուն, նկրտումներուն, սպառազինութեան եւ կատարած օրական զինադադարի խախտումներուն, ինչին դիմակայելու լաւագոյն ձեւաչափը ներազգային կայունութեան, անդորրութեան եւ համայն հայութեան միասնականութեան առկայութիւնն է։

Նոյնինքն Հայաստանի Հանրապետութեան վար–չապետ պրն. Փաշինեան Պելճիքա իր այցելութեան՝ ՕթԱՆ–ի ժողովներու եւ հանդիպումներու միջոցին կատարած իր յայտարարութիւններէն մէկուն մէջ կ'ըսէր. «Քանի որ պատերազմի վերսկսման վտանգը միշտ առկայ եղած է, եւ մենք պէտք է պատրաստ ըլ–լանք այդպիսի զարգացումներու»։ Աւելի ուշ, տարա–ծաշրջանի ռազմաքաղաքական լարուած իրավիճակի մասին ակնարկելով, 15 յուլիսին դարձեալ Հայաստանի վարչապետ պրն. Փաշինեան կ'ըսէր, որ՝ «պէտք է պատ–րաստ լինենք հակահարուած տալու»։ Այս իմաստով բարացուցական են նաեւ Հայաստանի Հանրապետու–թեան պաշտպանութեան նախարարի 23 յուլիսի կատա–րած շարք մը յայտարարութիւնները, յատկապէս երբ կ'ըսէ. «Ապրիլեան յարձակումին բեմագրութեան կրկնութեան պարագային, հայկական կողմը կրնայ չխուսափիլ իր ամբողջ զինանոցի օգտագործման գալ–թակղութենէն»։ Այդ իսկ պատճառով, այսօրուան գլխաւոր հրամայականը համայն հայութեան հա–մախմբուածութիւնն է՝ ազգ, պետութիւն, իշխանու–թիւն, եկեղեցի, կուսակցութիւններ՝ ի խնդրի համազ–գային ընդհանուր ուժերու լարումին եւ համապատաս–խան պատրաստուածութեան։

Արդարեւ, վերջերս Հայաստանի Հանրապետու–թեան սահմանամերձ գօտիի Արէնի գիւղի Նախիջեւանի հատուածին մէջ ռազմատենչ Ազրպէյճանի զինուորա–կան ոտնձգութիւնները իրապէս կը սպառնան ամբողջ տարածաշրջանի խաղաղութեան։

Այդ իսկ պատճառով մեր պաշտպանուածութիւնը մեր ազգային անփոխարինելի անվտանգութեան ռազ–մավարութեան մէջ է. հետեւաբար, ինչ կ'ուզեն՝ թող ըլլան տարածաշրջանի ռազմաքաղաքական սադրանք–ները, կարեւորը մենք որոշենք, թէ մենք ի'նչ կ'ուզենք։ Այսուամենայնիւ, մենք համոզուած ենք, որ նոր Հայաստանի իշխանութիւնները, ի խնդրի Հայաստանի եւ հայութեան անվտանգութեան, այսօր ոչ միայն կառչած կը մնան արեան գնով ձեռք բերուած պատմա–կան յաղթանակներուն՝ արցախեան հերոսական պատե–րազմի ընթացքին, այլեւ կը սպասենք, որ ատոնք ամ–րագրուին գետնի վրայ Հայաստանի իշխանութիւննե–րուն վարած ազգային քաղաքական մարտավարու–թեամբ եւ գործօն դերակատարութեամբ, արցախեան ռազմաճակատներու վրայ արձանագրուած յաղթանակ–ները քաղաքական միջազգային ճանաչումով եւ ար–դար կարգավիճակի մը լուծումով։

Վերջապէս, Սեւրի դաշնագրին վերադառնալով, իրապէս Սեւրի արծարծումը եւ հետապնդումը կը գօ–րացնէ Նախիջեւանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրա–պետութեան սահմաններուն ռազմաքաղաքական դիր–քերը, կը գօրացնէ տուեալ սահմաններուն եւ լեռներուն վրայ դիրքերը պահող մեր բանակայինները, ազատա–մարտիկներուն կորովը, տրամադրութիւնները, կը յուշէ անոնց, որ իրենք առանձին չեն այդ սրբազան խրա–մատներուն մէջ, այլ իրենց թիկունքը կանգնած է հա–մայն հայութիւնը եւ նոր Հայաստանը։

Արդարեւ, անժամանցելի են Հայաստանի Ա. Հանրապետութեան հիմնադիր Արամ Մանուկեանի հե–տեւեալ խօսքերը. «Մենակ ենք ու պէտք է ապաւինենք միայն մեր ուժերին՝ թէ՛՝ ճակատը պաշտպանելու, թէ՛՝ երկրի ներսը կարգ հաստատելու համար»։

ՄԵԼԻՔ ԳԱՐԱԳԱՒՈՐԵԱՆ



TOYOTA
2018
**FACTORY
EVENT**

WE CAN PREDICT
THAT THERE'LL NEVER BE
A DULL MOMENT
ON THE ROAD
THIS SUMMER.

Image for illustration purposes only.

Image for illustration purposes only.

COROLLA CE Automatic
From
\$49 /week*
60-month lease

RAV4 FWD LE
From
\$69 /week*
60-month lease

aeroplan GET 5,000 AEROPLAN® WHEN YOU PURCHASE A TOYOTA!

Conditions may apply. *Prices and weekly payments are estimates only. Actual amounts may vary. The displayed price includes Freight & PDI of \$1,815 towards the RAV4 FWD LE and \$1,645 for the Corolla CE, Air Conditioning Charge of \$100 if applicable and Dealer Fees of up to \$399. †Get 5,000 Aeroplan Miles with the purchase or lease of a new Toyota. For full and accurate vehicle availability and a detailed quote, please contact Toyota Gabriel St-Laurent dealer.

Դիմեցեք Մեծ Բարատանայեանին
լաւադոյն սպասարկութեան համար
Sam Karadanaian
Product Consultant
Tel: 514 748-7777 Ext.: 3810
skaradanaian@toyotagabriel.com

TOYOTA
GABRIEL
ST-LAURENT

3333, ch. de la Côte-de-Liesse
Saint-Laurent, Québec, H4N 3C2
514 748-7777
toyotagabrielstlaurent.com
< OPEN SATURDAYS >

Gift Voucher
\$200*

*Upon purchase or lease of a new 2018 Toyota. Offer can be modified or cancelled at any time. Cannot be combined with another offer. No cash value. Offer expires August 31st 2018. Contact dealer for details.

ARMENIAN HERITAGE CELEBRATION

ԽԱՉԿԵՐԱՅԻ ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ

ՀԵՐՈՍԱՍԱՐՏԻ ՅԻՇԱՏԱԿՈՒՄ

SATURDAY SEPTEMBER 8, 2018
\$25 ADMISSION
KIDS: AGE 5-10: \$10, UNDER 5: FREE
Շաբաթ Մատաղօրինէք ժամը 6:00PM
Խրախնամք ժամը 8:00PM

SUNDAY SEPTEMBER 9, 2018
FREE ADMISSION
Կիրակի Պատարագ ժամը 11:00AM
Հերիսայի Օրհնութիւն ժամը 1:00PM

Համեմի Մթնոլորտ Անտարական Տառչ Զուրնա
Համադամ Ճաշեր, Փոքրերու Խաղալայր

FOR HOTEL RESERVATIONS CALL:

CAMBRIDGE - Cambridge Hotel
700 Hespler Rd, (519) 622-1505
Discount Code: ACC

ARMENIAN COMMUNITY CENTRE
15 INTERNATIONAL VILLAGE DR.
CAMBRIDGE ON.
www.armeniancentrecambridge.org

WITH ENTERTAINMENT BY:
KHOREN MOURADIAN &
ARARAD AHARONIAN



CASSANDRA I.D.A. PHARMACY

ARMENIAN MEDICAL CENTRE
& PHARMACY

PHARMACISTS

SARKIS BALIAN, BScPhm, RPh
MARAL BALIAN, PharmD, RPh
VARTAN BALIAN, PharmD, RPh

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ՝
ՊԱԼԵԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐ՝
ՄԱՐԱԼ ՊԱԼԵԱՆ
ՎԱՐԴԱՆ ՊԱԼԵԱՆ

- Դեղագիրներու պատրաստութիւն՝ շաբաթական յատուկ տուփերու մէջ:
- Արեան ճնշման քննութիւն եւ հետեւողականութիւն՝ անվճար
- Շաքարախտի քննութիւն
- Դեղերը իրենց հասցէներուն առաքելու անվճար սպասարկութիւն
- Տարեցներու 10% զեղջ
- Կը յարգենք եւ սիրով կը կատարենք բոլոր ապահովագրական ընկերութիւններու պայմանները
- Walk-In Clinic բաց է շաբաթը 6 օր: Կրնաք բժիշկները տեսնել առանց ժամադրութեան:

Դիմեցէք մեզի եւ պիտի դառնաք մեր մնայուն յաճախորդը:

Walk-in Clinic onsite: (416) 331-9111

հասցէ՝ 2040 Victoria Park Ave. (Victoria Park & Cassandra)
Toronto, Ontario M1R 1V2 Tel: (416) 449-2040 Fax: (416) 449-2048



Հ.Մ.Ը.Մ. Գանատայի Շրջանի 48-րդ մարզական խաղեր



**Նուիրում Հ.Մ.Ը.Մ.-ի
Հիմնադրության 100-ամեակին**
Լավալ // 31 Օգոստոս, 1, 2, 3 Սեպտեմբեր 2018



Հովանավորությամբ՝

Գրշի. Տեր Բարգեն Արք. Չարեանի
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

Նախագահությամբ՝

Տեր եւ Տիկին Արթուր եւ Ալիս Մարգարեաններու



**Բացման հանդիսություն
Ուրբաթ, 31 Օգոստոս 2018**

Լավալի Հայ կեդրոն

Երեկոյեան ժամը 6:00-էն սկսեալ

- Գաղութային քայլարշաւ 2 քմ, նուիրում Հ.Մ.Ը.Մ.-ի 100-ամեակին
- Ջահիլ փոխանցում եւ ջահավառութեան արարողություն
- Ելոյթ Համագգային Անի պարախումբի եւ Քնար երգչախումբի
- Գաղութային ճաշկերոյթ - խրախճանք

**Փակման շքեղ հանդիսություն
Կիրակի, 2 Սեպտեմբեր 2018, Մոնթրէալ**

Complexe Sportif Claude-Robillard

1000 Avenue Émile-Journault, Montréal, QC H2M 2E7

Ժամը 11:30 - 16:30

- Ունագնդակի աւարտական մրցում – երեք տղաք
- Դրօշարշաւ 4 X 100 մ.
- Գեղարուեստական յայտագիր –
Պարախումբեր եւ երգչախումբեր
- Աւանդական տողանցք եւ
մրցանակաբաշխություն

Միքելի՛ հայրենակիցներ, կը հրաւիրենք
ձեզ մեծ թիւով ներկայ գտնուելու վերո-
յիշեալ զոյգ հանդիսութիւններուն

Մուտքը ազատ

**ՅԱՂԹԱՆԱԿԻ
ՊԱՐԱՀԱՆՈՒԷՍ**

**VICTORY DANCE
BAL DES VAINQUEURS**

Մասնակցութեամբ սիրում երգիչ՝
Էլի Պերպերեանի եւ իր նուագախումբին
եւ DJ Kevorkian-ի

Տեղի կ'ունենայ

**Կիրակի, 2 Սեպտեմբեր 2018-ին
Երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ**

SHERATON LAVAL շքեղ սրահներուն մէջ,
2440 Laurentian Autoroute, Laval, QC H7T 1X5

Մուտքի նուէր \$100

Տոմսերու համար հեռաձայնել
Տիկ. Յասմիկ Պիլեմճեանի 514 831-4755
